



ՍՈՒՐՔ ԶԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ

ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆ ՍՈՒՐՔ ԱՍՏՈՒԾԱԾԱՐ 18 ՕԳՈՍՏՈՍ 2024

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՐԳ ԵՐԳՈՑ ԳԻՐՔԷՆ (4.9-15, 9.6)

Փեսան.
Գրաւեցիր սիրտս, հոգեա՛կ իմ հարս, սիրտս գրաւեցիր մէ՛կ նայուածքով, վզիդ շնորհալի մէկ շարժումով:

Ի՛նչ զգլխիչ է սէրդ, հոգեա՛կ իմ հարս, որքա՛ն աւելի քաղցր է սէրդ՝ գինիէն, եւ զգեստներուդ անոյշ բուրմունքը՝ բոլոր խունկերէն:

Շրթներէդ մեղր կը կաթի, հոգեա՛կ իմ հարս, մեղր ու կաթ կը ծորի լեզուէդ. եւ զգեստներուդ անոյշ բուրմունքը նման է կնդրուկի բոյրին:

... Բուրաստաններու աղբիւրն ես. կեանքի ջուրին ակը...

Փակուած պարտէզ է իմ հարս հոգեակս, փակուած պարտէզ, կնքուած աղբիւր:

Ն ու ն ե ն ի ն ե ր ու ղ ր ա խ տ մ ը ն ե ս ղ ու ն ա մ ե ն է ն ը ն տ ի ր ե ւ

բուրումնաւէտ տունկերով՝ հինայ ու նարդոս, նարդոս ու քրքում, խնկեղէզ ու կինամոն, եւ խնկաբեր բոլոր ծառերով՝ զըմուռս ու հալուէ, եւ ընտիր բոլոր խնկենիները: Բուրաստաններու աղբիւրն ես. կեանքի ջուրին ակը, որ Լիբանանէն կը բղխի:

Տէրը ստեղծեց եւ հաստատեց քեզ ...

Տէրը ստեղծեց եւ հաստատեց քեզ, մօրդ արգանդէն քեզ պատրաստեց, ո՛վ կրներու գեղեցկագոյնը. մայրդ անթերի ծնաւ քեզ:

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (7.10-16)

Դարձեալ, Տէրը այս պատգամը ղրկեց Աքազի, ըսելով. «Տէր Աստուծմէդ քեզի համար նշան մը խնդրէ, երկրի խորերէն կամ երկինքի բարձունքէն»: Աքազ պատասխանեց. «Ո՛չ, զԱստուած չեմ փորձեր»:

Այն ատեն Եսայի ըսաւ.

«Լսեցէ՛ք ուրեմն, ո՛վ Դաւիթի տուն. չի՞ բաւեր որքան մարդոց համբերութիւնը հատցուցիք, որ կը փորձէք Աստուծոյ համբերութիւնը եւս հատցնել: Ծիշդ այդ պատճառով Տէրը ի՛նք հետեւեալ նշանը պիտի տայ ձեզի.– Կոյսը պիտի յղանայ եւ զաւակ մը ծնի, որ «էմմանուէլ» պիտի կոչէ:

Կոյսը պիտի յղանայ եւ զաւակ մը ծնի, որ «էմմանուէլ» պիտի կոչէ:

Անիկա կարագով ու մեղրով պիտի սնանի, եւ նախքան չարը ճանչնալը եւ կամենալը՝ բարին պիտի ընտրէ. եւ տակաւին անիկա բարին ընտրել ու չարը մերժել չսորված՝ երկու երկիրներն ալ, որոնցմէ դուն կը վախնաս, իրենց թագաւորները պիտի կորսնցնեն եւ քու երկիրդ պիտի փրկուի»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒԳ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (3.29-4.7)

Ապա, ուրեմն, եթէ Քրիստոսի կը պատկանիք՝ կը նշանակէ թէ Աբրահամի զաւակներ էք եւ պիտի ժառանգէք ինչ որ Աստուած անոր խոստացաւ:

Բայց գիտցէք նաեւ, թէ ժառանգորդ մը թէպէտ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն որ անիկա անչափահաս է՝ տարբերութիւն չունի ծառայէ մը, քանի

Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն: Կ ենթարկուէինք ու կը ծառայէինք:

... Աստուած մեր սիրտերուն մէջ դրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը կոչենք:

Խնամակալներու եւ հոգաբարձուներու ենթակայ է, մինչեւ հասնի իր հօրը որոշած ժամանակէ տը: Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ զրկեց իր Որդին, որ մարդկային մօրմէ մը ծնաւ եւ Մովսիսական Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ

անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ զրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը կոչենք: Ուստի, այլեւս ծառայ չէք, այլ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (2.1-7)

Այդ օրերուն Օգոստոս կայսր հրամանագիր հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիոյ կառավարիչ Կիւրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ Դաւիթի սերունդէն ըլլալուն համար, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքը՝ Դաւիթ թագաւորի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթլեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր

Այժմե՛ք
ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԴԻԱՍՏԵՏՐԻ ԷՁՈ
ԵՒ
ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹԻԿԱՆ
յԱՅՏԵՑԷՔ (like).
www.facebook.com/SourpHagopChurch-Montreal
Այժմե՛ք նաե՛ւ
Ս. ՅԱԿՈԲ
ԱՌԱՋՆՈՐՊԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԿԱՅԲԷՁՈ՝
www.sourphagop.net

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻԿԱՆԵՐՈ
ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՑԷՔ ԿՊՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ: